



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**  
**ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“ ..... ” ..... 2020թ.

N.....

«ՊԱՐԱՄԱՌԻՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի  
 տնօրեն Ա. Պետրոսյանին  
 Հասցեն՝ ք. Երևան, Իսրայելյան 32/2

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

(Լսումներ իրականացնելու մասին)

Հարգելի պարոն Պետրոսյան

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 35-րդ հոդվածով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 02-ի թիվ 295-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ «ՊԱՐԱՄԱՌԻՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով:

Հաշվի առնելով ՀՀ-ում համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակը, «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ սահմանված ՀՀ ողջ տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի նկատմամբ ժամանակավոր սահմանափակումները, Նախարարությունը դրսևորելով քաղաքացիական և սոցիալական պատասխանատվություն՝ նշանակված վարչական լսումները 2020 թվականի մարտի 20-ին տրված ծանուցմամբ հետաձգել է մինչև արտակարգ դրության ավարտը:

Հաշվի առնելով, որ վերացել են տեղաշարժման իրավունքի սահմանափակումները, ինչպես նաև վերականգվել է պետական կառավարման համակարգի գործունեությունը՝ վարչական լսումները վերսկսվում են:

Սույնով Դուք տեղեկացվում եք, որ վարչական լսումները տեղի կունենան 2020 թվականի հուլիսի 20-ին, ժամը 12:30-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում (հասցե՝ Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, 7-րդ հարկ, նիստերի դահլիճ):

Վարչական վարույթին կարող եք մասնակցել ինքնուրույն կամ Ձեր ներկայացուցչի միջոցով: Խնդրում ենք վարչական վարույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով և (կամ) լիազորագրով: Պատշաճ ծանուցված մասնակցի չներկայանալը արգելք չէ վարչական վարույթի քննության համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը:

Կից ներկայացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 02-ի թիվ 295-Ա հրամանը – 2 թերթ:

 Invalid signature

X 

ԼԻԼԻԱ ՇՈՒՇԱՆՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SHUSHANYAN LILIA 7605910584

Լ. Շուշանյան

Կատարող՝ Լիլիթ Փաշայան,  
Իրավաբանական վարչություն, Նախարարության  
իրավական շահերի պաշտպանության բաժնի պետ  
հեռ. 010511312